## 69. ՊԸԵԼ ԱԽՊՈՐԸ ՀՈՒ ԽԵԼՈՒՆՔ ԱԽՊՈՐԸ ՀԱՔՅԱԹԸ

*Իլա̈լ ա չիլա̈լ մին պըել ախպեր, մին էլ մին խելունք ախպեր։ Ըստահանք քյինացալ ըն մին թաքավերի չոբան նի մտալ հու աման վախտ էլ հացրնեն նհետնեն տանում ըն իլա̈լ։ Մին վախտ մտընան քիցալ ըն, հացը տարալ չըն։ Խելունք ախպերն ասալ ա. «Պըե՛լ ախպեր, տու քյինա հաց պեր, ես ըստեղ վըչխարնեն պահեմ»։ Սա քյինացալ ա հու պիրելիս տեղը արև ա իլա̈լ։ Քմակին վըեր եշալ ա տըեսալ շոխկը ընկած քմակին, կլոխը տու̈րու̈ր տալավ ասալ ա, թա. «Ընդե հը՛, հինչ ա՞, հաց ը՞ս օզում»։ Վըեր ինքյը կլոխը տու̈րու̈ր ա տվալ, շոխկին կլոխը տուրուր ա եկալ։ Մին հացը տվալ ա ու̈րա̈ն հու մինչև ախպորը կոշտը հացը ըստըհենց անելավ լոխ կլխըցրալ ա։ Եկալ ա, ախպերն ասալ ա. «Հոր ա՞ հացը»։ Ասալ ա, թա. «Ընդե մարթիքյը օղեցին, տվի ու̈րա̈նց»։ Խելունք ախպերն ասալ ա. «Տու վըեչխարնեն պահի, ես քյինամ հաց պիրեմ»։*

*Էս պըել ախպերը քյինացալ ա մին տանձի եր իլա̈լ, շըղհարալ։ Էծերը հու վըեչխարնեն եկալ ըն կերալ։ Պըել ախպերը ընդաղան ասալ ա. «Իմ փայս պահեցեք»։ Սահանք էլ գյիդացալ չըն թա հի՞նչ ա ասում, հեյլա ասալ ա. «Իմ փայս էլ պահեցեք»։ Էս պըել ախպերը վըեր ըստըհենց շատ ասալ ա, մին դոնում որ շըղհարալ ա, մինն ինգյա̈լ ա էծին պոզը, ասալ ա. «Յարադանիտ մատաղ ինեմ, իմ փայս պաղէտ պտկին ը՞ս պահում»։ Վեր ա եկալ, ըստահանց լոխճին կտորալ, էն էծին պահալ։*

Ախպերը էկալ ա, ասալ. «Հոր ա՞ վըրեչխարնեն»։ Ասալ ա, թա. «էն ղդար տանձ ըմ օտըցըրալ, վըրեր հեն ըն քեփնեն քյոք, ծծաղեյիս»։ Քյինացալ ա տրեսալ կտորած հու կեռքնեն պեց։ Ասալ ա, թա. «Ըստրա էշի, էս խե յը՞ս ըստըհենց ըրալ. դե էկ տանենքյ դուղումը տիղ տանք, քյինանք մեր դոլլուղնես ինքյ օնենքյ, փախչենք»։ Նա էլ ասալ ա, թա. «Ընդե հա»։ Քյնում ըն, վըրեր ոչխարնեն տանեն։ Պըճել ախպերը ղոռավ ա ինում, տասսը-տասներկունը չիլակում ա, տուս պուրում դուզը։ Ետնան քյինում ըն թաքավերին ասում. «Ա՛ղա, մեր դոլլուղը տո, վըրեր մունք քյինանք, չյունքի վըրեր մեր չենիցը մարթ ա էկալ, թա՝ քու հար, քու մար մեռալ ըն, էկ»։ Թաքավերը հրցրալ ա, թա. «Հոր ա՞ ոչխարնեն»։ Ասալ ըն. թա. «Ընդե հենե դուզումը նստոտած»։ Թա. «Նստեցեքյ հաց կերեքյ, վըրեր դոլլուղնետ տամ»։ Հաց օտելիս տեղը խելունք ախպերը խե շատ շուտ-շուտ ա հաց կերալ։ Պըճել ախպերը ետ ա տառալ, ասալ. «Հը՞, խե՞ շուտ-շուտ ըս հաց օտում, ես տասսը ոչխար չիլակեմ տուս պերեմ, տու մինը, համ էլ շուտ-շուտ ըս հաց օտում»։ Նա էլ ասալ ա, թա. «Քմատաղ, ճանըս քմատաղ, լոխ քյեղհնի, ես օղում չըմ, թաքյ լա խոսես ոչ»։ Ըստըհենց թողացալ չի, թա հաց օտի։ Ետնան վըրեր հացը կերալ ա, պրծալ, քյինացալ ըն վըրեր դոլլուղնեն ինքյ առնեն։

Դոլլուղնեն ինքյ ըն կալալ, քյինացալ ուրուգյունը մին կարան։ էն կարանումը տըեսալ ըն մին առչի պուն. էս առչիս էլ լակուտնե յա իլալ։ էս առչը եր ա կացալ, ասալ. «Պարո՛վ, պարո՛վ, ձեզ օտիլ չըմ, ամմա թա վըրեր իմ լակուտնես լղցնեքյ»։ Նահանք էլ ասալ ըն, թա. «Լավ ա»։ էս խելունք ախպերը մին օր լղըցըրալ ա։ Նորաթը ինգյալ ա պըճել ախպորը։ Պըճել ախպերը լակուտնեն ածալ ա ղզղանին մեչը, իփ տվալ։ Խելունք ախպերը հու առչ ախպերը, վըրեր վըրսըրտեղից եռ տառնալիս ըն իլալ, խելունք ախպերը ասալ ա. «Ա՛ռչ ախպեր, ես քյինամ լղըցընեմ, տու էլ ըտեղ վըրերս ըրա»։ Ասալ ա թա. «Լավ ա»։ Նա էկալ ա ասալ. «Պըճել ախպեր, լըղըցըրալ ը՞ս»։ Թա. «Ընդե էն հանգին լղըցըրալ ըմ, վըրեր հեն ըն քյեփընեն քյոք, ծծաղելիս»։ Քյինացալ ա տըեսալ, վըրեր իփ տված, ածած կարպետին տակը, ասալ ա. «Ադա, էս հինչ ը՞ս ըրալ, դե վըրեր ըստըհենց տառավ, էկ փախչենք, քյինանք»։ Փախալ ըն, քյինացալ մին Օրանն ճաղաց։

Առչը էկալ ա, տըեսալ լակուտնեն սպնոտած։ Ման կյալավ քյինացալ ա ճաղացին տոռնը թակալ։ Խելունք ախպերը էկալ ա պացալ։ Պըճել ախպերը մին ճղցպեղարճ ա չինալ, տիրալ ճղացին

քարին յրա։ Առչը խելունք ախպորը սկիցըն ա կացալ, ասալ, թա. «Լիհա տու ըս իմ ճուհրըս ըսպընոտալ»։ Ըստեղ կոխ ըն փռնալ։ Լիհա վըեր կոխ ըն փռնալ, պըել ախպերր ասալ ա, թա. «Աղա̈ մին կոխկիցը փոնի չե՞, աղա մին կոխկիցը փոնի ճղացին քարավը նկ է՞»։ Խելունք ախպերը ասալ ա. «Քմատաղ, ինձ ըսպանեց, եր կաց»։ Նա էլ ասալ ա, թա. «Դե մին թող վըենը պիլիթիս նի կյա̈, ես իրան կասեմ»։ Մին էլ ա ասալ խելունք ախպերը. «Ա՛ քմատաղ, ինձ ըսպանեց, ե՛ր»։ Ասալ ա, թա. «Լիհա̈ մին թող վըենը պիլիթիս նի կյա̈»։ Խելունք ախպերր ասալ ա. «Ա՛ քմատաղ, ե՛ր, ինձ ըսպանեց»։ Ասալ ա, թա. «Լիհա̈ վըենը պիլիթիս նի սիրտի կյա̈, վըեր եր կենամ»։

Աստվածանից ու իլա̈լ, հինչից ա իլա̈լ, առչին հա̈քյուն պիլիթին նի յա եկալ։ Պըել ախպերը եր ա կացալ առչին մեչան ճղալ, թիցա̈ դոնղուղըղը։ Պըել ախպերր ասալ ա. «Խելունք ախպեր, իմ մար ինձ լիսեռնն ա չինիլ տալու, էս ճղացին քարը լա̈վ լիսեռնն ա, եր օնեմ, տանեմ»։

Եր օնելից ետը քյինացալ ըն ուրուսյումը մին տանձի ծառ թիթալ։ Խելունք ախպերը եր ա իլա̈լ տանձի ծառը։ Պըել ախպերը ասալ ա. «Տու եր ըս ինում, ես եր չըմ ինիլ»։ Սղացալ ա, թա եւ ինի, ճողնը կոտրալ ա ճղացքարին ծանդրութունիցը, վըեը ա ինկյալ։ Ախրը ղոռավ-կյիժավ եր ա իլա̈լ։ Մին քյարվան եկալ ա տակին վեր եկալ։ Պըել ախպերը խելունք ախպորը ասալ ա. «Կյուղըս կյամ ա»։ Նա էլ ասալ ա. «Պա հունց ը՞ս անում»։ Ասալ ա, թա. «Կյուզում ըմ»։ Կյուզա̈լ ա, քյարվանին յրա յա տառալ։ Մին էլ ասալ ա, թա. «Կռնըրըս նղացալ ա, քարը վեր ըմ քցում»։ Խելունք ախպերը ասալ ա. «Վեր ըս քցում, վեր քցի»։ Վեր ա քիցալ, քյարվանին մարթոցը ըսպընոտալ։ Քշերավ վեր ըն եկալ, խելունք ախպերը փողն ա հվաքալ, պըել ախպերր յորղան-դոշակը։ Եր ըն կալալ, քյինացալ։

Ուրուզյունն էլ փսո̈նկյու յա իլա̈լ, պըել ախպերը յորղանումը պտատվալ ա, ապրալ, ամմա խելունք ախպերը եր ա կացալ մըռալին մին ծիյի յրա կպոտալ, մին տումչակ ըրալ, մին ճոնդը տիրա̈լ ծերքումը, մին ճոնդըն էլ սիրա̈նումը, ետնան ծին ըրալ մին առտ, ինքյը կյողյու կացալ։ Առտատարը եքի կյխան կանչալ ա, թա. «Հե՛յ, հե՛յ, այ ծիյատար, ծին առտը օտըցնիլ մի»։ Նա էլ խոսացալ չի, չյունքի վըեր մեռած ա իլա̈լ։ Առտատարը վազ տալավ եկալ ա մեռած մարթին ընկուչտակին մին լա̈վ թխալ, մըեռած մարթըն էլ ինկյալ ա ծիյին էն ղոլը։ Պըել ախպերը եկալ ա ասալ.

«Հա՛յ շան տղա, խե՞ իմ ախպոր ըսպանեցիր», հու քյինացալ էն մարթին պկան փռնալ, թա. «Էկ քյինանք երկրիս տարին կոշտը»։ Թա. «Քմատաղ, նանս քմատաղ, իմ տոնս-տեղս քյեզ մատաղ, քյինալ մի աող անիլ»։ Պըելը ըստրա տոնը-տեղը ինքյ առնելից նոր եր ա կացալ քյինա̈ցա̈լ ո̄ւրա̈ն հորը տոնը։

Աստվածանից իրեք խնձոր վեր ինգյի. մինն՝ ասողին, մինը՝ լսողին, մինն էլ՝ չիլսողին։